



15 (170). Չ ԱԽՄԱԽ ԱՂՎԸՍՈՒ ՈՒ ԱԽՄԱԽ ԳԻՂՈՒ ՀԵՔԻԱԹ

Կէղնի-չէղնի հին ժամանակ մեկ ֆել ու ֆանդով աղվես. Լգ աղվես էն աղվըսու թոռան թոռ կէղնի, օր ջրհեղեղու վախտ մտած է էդի Նոյի աապան: էդ աղվես, կըսին, շատ ուսումնական կէղնի, դիտնոց հետ կը նստի կանի, թլիսման կէնե, գիր կիշկե, հեքմութենն ձեռնեն գիկա, հմա գու մ'սի, Լգ չըմեն դրուկ կէղնի մեկ դեն ու մինակ մարդ ու գաղան կը խաբեր:

էդ աղվես, կըսին, խնդութ շէր, հմա կը խոսեր մըջ քթին, բաձ մե օր կըսեր, լսողներ շըն չիմանի ինչ կըսե, հմալ վիռա-վիռա վրա էիտա, կը խառնե չիրար, օր աստված աղատե, ըշտե էդ ֆել ու ֆանդով՝ ղլսողներ կը մոլըրցուցեր: Խուլասա, էդ աղվես օր մեծ ուսման տեր էր, գիտնակ էր չըմեն բանի, տարին տըսվերկու ամիս անոթի կը ղվոներ: Օրերուց մե օր կըսե.

— Իդա գիտութեն ընձի ընչի՞ է պետք, օր կը ղվոնիմ անոթի փորով, հը: Գելնամ սար՝ ծաղիկ կը տեսնամ, գիջնամ ձոր՝ կակուղ խոտ, հմա ընդոք ղիմ փոր շը կշտացուցեր ին: Յորի՞ն անսվաղ, չըմեն բանե մաչրում ղվոնիմ, չելնամ ժուռ գամ գեղրանք, քաղըրներ, բալքի ապրուստի ճար մե էնիմ:

Կըսե, գելնա չընկնա ճամպա: Շատ կէրթա, քիչ կէրթա, կը հասնի Բասրա քաղաք, կը մոտենա քոշկի մե, կը տեսնա բախչի մե՝ ուր չառեջ, օր իմալ դրախտ, շորս դեն պատ քաշուկ, մեջտեղ՝ բրբխտան հաուզ, ուր շորս բոլորտան փունջ մանուշակ ու հաղընվարդ, նարգիղ ու շուշան, բալասան ու աղբըրանց արուն, հոտ բըռ-

ներ է զախշար: Հազար հազար տեսակ հավքեր վըր ծառերուն թա-
ռուկ՝ հըմալ խաղ ու տաղ կըսին, օր մարդ մայիլ կը մնա: Հազար
հազար տեսակ պտուղներ կը վառին վըր ծառձղերուն, թփերու,
աչքով կէնին, զմարդ խելահան կէնին, ուր մնաց թե աղվես:

— Ը՛հը,— կըսե,— իդա Ադամա դրախտն է, մեջ ինչ ըսիս՝
կա, կանի սա՛նք ի՞նչ կոնանք էնի:

Աղվըսու բերնեն ջուր կը վազե, զպոչ կը տնկե դարձու իմա:
ջայրա, կը թռնա մտնի րախշեն, ծերից-ծեր կը դվոնե, արեզդեմ
էզած պտուղներուց համտես կէնե, էն խդեր կուտե, օր կը տուի
պարկի վըր կանաչ խոտին, չետե կը թաղըլտի, կուրախնա, կը
խնդանա, դելնա կանի չոտքի, կըսե.

— Խելոքներ փորձով դինան, օր շատ ուրախութեն ուր հետ
տրտմութեն կը բերե, ընձի հերք է ուրախամ, քիչ մը լե դվընիս՝
տեսնամ ի՞նչ կա, չկա:

Գելնա օր դվոնե, կը տեսնա հանդե ածու մե, վրեն շաման ցա-
նած դմակ մե դրուկ է, տակ լե բան մե սարքուկ: Ի՞նչ կէղնի, չէղնի,
հմա բերնից էլման ջուր կը վազե ու միտք կը բերե, օր էդ դմակ՝
հեքիմներ կըսին, թե փորհարինքի դեղ է, զփոր դիստըկե, ղլերդ,
սիրտ, անկաջ, իջվածք կը սաղցու, դեղին մաղձ, թանձր խուխ կը
սրբե, տանե:

— Իդա խդեր պտուղ օր ես կերա՛ վա՛յ թե ընձի նեղութեն
իդա, կանի դամակն ուտիմ, չը բովիմ դողուշողով, իմ ներս յիստը-
կիմ, հմա բան մե լե կա, չէղնի գիտնոց ըսածով վոաղիմ, ու փոշ-
մընիմ: Յըմեն կըսին. «Գիտուն աղվես էրկու չոտքով դընկնա տու-
ղախ»: Օղորդ կըսին, ըպա՛...»

Աղվես դմակ տեսնա ու բաքլա էնե, ըդի էղնելու բա՛ն է:
Գմակ կը կաթկթա, ազվըսու փոր կը պտպտա, դե՛, արի ու դիմացի:

— Խանե զկաթիլներ լիզի՛մ բալքի իմ փոր ըռհաթի: Շատ
վախկոտութեն լե բան մե չէ: Էդ ի՞մալ բաղըրկըներ ծով կը մտնան,
էրկրոց-էրկիր կէրթան ու գիկան. մարդ, օր փշից վախենա՛ կոնա՛
մոտենա ծաղկին, հոտ քաշե. ծովու ներքե օր շիխշնան յիջնան,
կոնա՛ն մարգըրիտ ձեռք բերին: Հալբուքի էդ չըմեն հմալ է, հմա
իդա տեղ բան մե կա, կըսին, թե չերկեն մարդիկ ախմախ կէղնին,
էրթամ ուզուն-ախմախ մե դտնիմ, բերիմ գիդա դմակի փրուղն
բանամ:

Կըսե աղվես ու կը թորկե կէրթա: Կէրթա, կէրթա կը հանուրաի
չերկեն, շորթան աչքեր գիլու մե, խելքից պակաս ու փանաքի, բարև
կիտա, բարև կառնե, կը կանի չառեջ, կըսե.

— Գե՛լ, աստված քու տուն ավերե, քերեսդի սև՝ իմալ գործելի, աչքերդի պղտոր, շունչդի կտրեր չ փորդի կպեր կողերուդ, վա՛ւ, բբդի բունին, քու մորթին քուրք էնին, բարով ծեծվիս, բարով կծվիս, շներ քրդի էնին կտոր-կտոր, էլման սաղ մնաս, բարով տեսանք, դե՛լ քրդի բարով-խերով տեսանք: Քու պես ըսկի ախշար չր ճարվի, դե՛լ քրդի օր ըսիմ, հա՛...:

Գե՛լ, չեղիկն ու ախմախ, կը լսե Չ'ախմախ աղվըսու քերիկն բարուդ, օր վիռա-վիռա վրա կիտա, սիրտ կը լցվի, կը դառնա, կըսե.

— Ա՛յ դու շան լակոտ աղվե՛ս, հմալ խոսա, օր բան հասկընանք: Ի՛նչ է հմա կը բքնիս, գու փորսի տես, փորսի, կպեր է կողերու, էդ քու խսեն գոռ ժե չաժե, ըսե սա՛նք մեք փոր ի՛մալ կշտացունք:

— Փոր ի՛մալ կշտացունք: Հլա յառեչ-չառեչ ըսիմ թե՛ ո՛ն իմ ես, վի՛ր պորտիցն իմ, նոր ըսե մեք փոր իմա՛լ կշտացունք: Տնաշե՛ն, ես օր կամ ուռում Ջալինոս հեքիմի ջնսիցն իմ: Իմ հերն օր մեռավ՝ ընձի օսյաթ էրեց, օր ըսկի բերան չը բանամ՝ սուտ խոսիմ: Շատ էրկրներ իմ ման էկի, քու բարի անուն լսեր իմ, սղորմի քու ծնողաց, քու շնորքին ընձի արժան էրե, դառնանք բարևկամ, դու՛ ընձի աղա, ես քրդի ծառա, դատիմ-բանիմ զքրդի պահիմ, մինակ քու բարի անուն ուր շուք թալե վրեսի: Իմ անուն Չ'ախմախ աղվես է:

Գե՛լն էդ գովքից ուր մեք կը փքվի, օր հմալ մեկն էկեր է ուրին ծանոթութեն, կըսե.

— Ապրիս, ապրիս, աղվե՛ս, շատ աղեկ իս էրի, օր էկեր իս ընձի տեսութեն. բարով, հազա՛ր բարի իս չկի:

Չ'ախմախ աղվես մըջ ուր մտքին ըսեց. «Իդա օր կա՛ ախմախ դե՛լն է ու ախմախ գե՛լ, կանի ես ըզրա գլուխ ի՛նչ օղյաթ բերիմ»:

— Ի՛նչ կա, ի՛նչ չկա, աղվես:

— Ի՛նչ պտի էդնի,— կըսե չ'ախմախ աղվես,— մըջ ախշըրին իրեք տեսակ ափսոսալու բան կա՛ քոռի չառեչ լուս բռնել, արևի դեմ ճրադ վառել, մեկ լե, եք գիտուն կապրի հըտ անգետին...

— Հըմալ օր օղորդ է, ըպա՛... Գիլու անունն է քերի՛ աղվեսն է դախշար քանդի: Վախտ մը լե ըսին, թե դե՛լն է ղճովսեփ կերի, լե ախշար գինա, օր ուր ախպըրտիք ծախին ղճովսեփ Մսրա քավընջոց: Ըպա հմա՛լ կըսին, զմեր անուն կավիրին, լե գեղրանք ու քաղքըներ ուրանց տեղ նստուկ՝ ուր:սնց գործ կէնին: Իմ մեծ պապ, օղորմի հոգուն, զուլամա գե՛լ մ՛ էր, էրկու ջեյրան կը բռներ, մեկն

ինք կուտեր, մեկել կը տաներ տուն: Ըշտե ես էդ գիլու թուան
թոռն իմ:

— Գինա՛մ, գինա՛մ,— կըսե շախմախ աղվես,— ըդոնք յըմնն
օր կըսիս՝ գինա՛մ, հմա ձեր մեջ ի՞նչ օրենք ու ադաթ կա, ըդոնք
չըմ դինա, չըմ լսերի:

— Մեր մեջ օրենք-ադաթ կա, ա՛խպեր, օր օխչըրի յընցնելու
վախտ մըզնից ամեն մեկ բռնե օխչար մե, թե օր շներ մեջ խառվին.
չը թողին՝ թաթ գերկընցունք, դժմակ կը փրցունք, առանց ծամելու
կը կլունք, սորա կը փախնինք, թը՛ղ հովիվներ ինչքան դուզին ձվան
ու բոռան, շներն լե ինչքան գուզին՝ հաջան, մենք կը փախնինք, մեր
իզուֆոզ կը կորի: Բե բախտ լե բերեց, քանիմ՝ մուլըրուկ օխչար թի
կտրվին ճղից, յետ մնան, ընդոնց լե կը խեղդինք, մեր փորու գորա
կուտինք, մեկել կը թալինք մեկ դեն, թրղ էրթա հոտի: Մկա դու լե
ձեր օրենք-ադաթ ըսե ընձի սա՛նք:

— Մեր ադաթ լե իդա հմլա է: Օղորթ է՝ մենք ձեր գորա զոր ու
զորընդեղ չինք, հմա շատ ֆել ու ֆանդով ինք: Մենք զզորնդեղներ
չիրար հետ կը կովըցունք, մեջտեղ մենք կը շահինք:

— Ըդի, վո՛լա, շատ աղեկ օրենք-ադաթ է: Գինամ, օր սուտ չը՛
լսի, մինակ գուղիմ չիմնամ, թե դո՛ւ իս մեծ, թե՛ քու ուլապ:

Աղվես կը քնծղտա, յուշիկ կըսե.

— Գե արի իշուն բանջար խաշե. թե չըկերավ՝ մեկ լե խաշե:
Լսե՛, քրղի առակավոր խոսքմ՝ ըսիմ. մարդ մե նստուկ կէղնի շու-
կեն, չամիչ կուտե, ուրիշ մարդ մե գիկա, կը հեռոտի, կըսե. «Չը՛
ա՛մ չընա մըջ շամչին շուկեն կուտիս»:

— Չըմ հասկընա,— կըսե գել:

— Մեկ լե ըսիմ,— կըսե աղվես:— Մարդ մե ուր յառեջ կը դն
հրիսի աման, կուտե, մեկ ուրիշ գիկա, կըսե. «Անկո՛ւշտ, հերք չե
ուտիս, իմ փոր ցավաց»:

— Չըմ հասկընա, ամբաղ-զամբաղ մը՛ խոսա, իմ շլուխ ցավ-
ցուցիր:

Աղվես գուզե գիլու սիրտն առնե, կըսե.

— Մը նե՛ղանա, իմաստուն գել, արի քու ծառային շնոր էրե,
էրթանք տուն, գիմ աղ ու հաց կտրե:

— Էրթանք,— կըսե գել,— փորսի վեց-վեց կէնե:

— Հմա բան մե պտի ըսիմ, օղորմի քու անցավորաց, լուս ձի-
րի իմ հոր հոգուն, իմ հեր ընձի օսյաթ էրեր է, օր ժամանակին ձա-
շիմ, կերածն աղեկ մարսըվի, էրթանք, թե չէ չիրկուն օր էղավ, հա՛մ
կը յանգընանք, հա՛մ գիշեր լե իք փորով չընք կոնա քնի:

Իրնկնան ճամպեն. դելն օրորվելով, աղվեսն աքլափուստ տու-
լով, կէրթան, եր կը մոտենան Բասրա քաղքին՝ գիկան կը հասնին
բախչին, օր կը հասնին՝ աղվես կը թռնա պատ, ուրին կը թալե
նեբոս, դել լե կը թռնա, գիջնա, հմա շատ կը վախենա, հոգին կը
դառնա կորեկիմ՝ հատ:

— Չ'ախմախ աղվես, — կըսե գել, — վո՛ւա աղեկ բախչեմ
ւնիս, հմա շըմ դինա յորի՞ն կը վախենամ, վա՛յ թե իդա տեղ մեո-
նիմ անտեր-անաիրական. հը՞, ի՛նչ կըսիս, շըմ մե՞ռնի:

Գիլուն էլ աղվես կը լսե՞, կը վաղե դըխ շամանոց, չուր օր
դմակն է դրուկ, ուրախ-դուրախ կը թովոա, տոճիկ կը թալե, օյին-
յօյին կէղնի, կը թապըլտկի, դելնա կանի, դպոչ կը խաղցու, գիկս:
սիլու մոտ, կըսե.

— Գել աղա, մեր ճաշ հա՛ղըր է, հրամեք էրթանք:

Անոթի գել ու դմակ. օր զդմակ կը տեսնա, բերնեն ջուր կը
վաղե, խելք կէրթա, քիչ մնա ուշք յընցնի, հմա ուրին կը ժողվե,
հիւթա կը հասնի դմկին, բալքի մինակ թե լիղե: Աղվես էդ վախտ
խրատ մե կիտա.

— Ա՛ղա, քիչ մե սարր էրե, հարի էրթամ ջուր բերիմ, օր զքու
թաթեր վլաս, իդա սար չէ, քաղաք տեղ է, կը ծիծղան վըր քըղի:
Հլա դեռ սուֆրեն սլտի սլարդիմ, աման դնիմ, դանակ-չանդալ բե-
րիմ, օր քաղաքվարի, շենք-շնորքով նստինք ուտինք:

Աղվես յանի թե կէրթա ջրի, գել, դու գել, չկունա անոթնե սաբր
էնե, պապսում կիշկե գմկին, պնչներ կուոցու, քիթ կը ֆսֆսցու,
նեալանեղի պես կը թռնա դըխ դմակ, մեկ էլ էն դիմնա՝ օր շըրխ-
կոցով, թըրխկոցով տուզախ կը փակվի, գելն ի մեջ: Աղվես կը թըո-
ցու դգմակ, կէրթա կը նստի մեկ դեն, անուշ կէնե, դել տուզախի
միջեն կըսե.

— Աստծու չերեսեն յընկո՛ւկ, խարդախ անամո՛թ, շըմ ցավա,
օր յընկեր իմ ի տուղախ, կը ցավամ, օր դգմակ մինակ կուտիս:
Աղվես կուտե, կը սրբաբերնի, կանի մե կողմ, կըսե.

— Տո՛, չերկեն, կեռ սյոչ ախմախ, խղճուկ Չ'ախմախ աղվեսն
ի՞նչ էներ քըղի, զընդոր խրատներ շը լսիր, քոռե-քոռ չընկար ի
տուղախ, ես մեղավո՞ր իմ:

Գելն չիլաց, հըտ լալուն՝ խաղմ՝ ըսեց.

— Աղվես, աղվես,
Յանդուդ էրթաս,
Ետ շը դառնաս,
Յելիս հավեն.

Յընկնիս թավեն.
Զը պրծնաս
Դարդ ու ցավեն:

Աղվեսս կանազ գիլու դեմ, ծիծղաց. Նըտ ծիծղալուն խաղմ՝ ըսեց.

Հե՛րբ լկկաս,
Գուզե ճոաս,
Գուզե մոաս,
էդ փակուկ տեղ
Պտի մնաս.
Դու չի՛ս անտեր,
Ե՛ս եմ անտեր.
էրթամ ման դամ
Սար ու արտեր:

Կըսե աղվեսս, կը թողե կէրթա: Աղվըսուց չետե բախչի տեր
դիկա, ներս կը մտնա, կիշլիե գտուղախ, կը տեսնա՝ հանդե չերկեն,
բոբոշիկ գեկ մե չընլի մեջ: Կը կանչե ուր խղմաթբարներ, ղղեկ կը
քարկոծին, սատկըցուն, մորթին կը հանին կէնին քուրթ, ղջանդա՛յ
լե բախչից կը տանին դուս, կը թալին խոռոյե մե, կէղնի շնեբու փայ-
բաժին:

